

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԿԱՆԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄՇԽԿ

Տարեկան գինը 10 ռուբլի: Կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միջին լատիներենով:
Մեր հասցեն: Тифлис, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschakъ».
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խիտրությունը բաց է առաջին 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերից):

Յուրաքանչյուր ընդունվում է ամեն լիցիտով:
Յուրաքանչյուր ընդունվում է ամեն լիցիտով:
Յուրաքանչյուր տողատեղին 10 կոպեկ:
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ՀԻՐԱԿԱՆՔԻ ԳՐԱԿԱՆԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Մարթա Սարգսյան Բանաթիւն, Հովհաննէ Խանգուաթիւն, Աւետիս Բանաթիւն
լայտնում են իրանց ծանօթներին և բարեկամներին՝ առաջին սիրելի եղբայր, երկրորդի
թանգազին քեռի, իսկ երրորդի աներորդի

ԻՐԻՑՅԷԼ ՍԱՐԳՍԵԱՆ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ Թիֆլիսում, ուրախ, փետրվարի 8-ին: Յուրաքանչյուր ընդունվում է ամեն լիցիտով:
Կը լինի կիրակի, փետրվարի 10-ին, առաջին 10-ին, Մշակույթի փողոցի վրա
գտնվող № 16 տանից դեպի Մոսկովսկայա: Գեղարք եկեղեցին, իսկ թաղումը՝ Խոջիվանքի գերեզ-
մանատանը: Ամբիճը՝ այսօր, փետրվարի 9-ին, երեկոյան ժամի 6-ին: 2—2

ԲՈՎԱՆՆԵՐԻ ԿՐԻՍՏՈՍԻՆՆԵՐ
Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կրիստոսիայ գրոյց.
Երկրաչափից վնասվածների օգտին. Ականա-
տեաները Շամախում. Նամակ Բագուից. Ներ-
քին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ
Պարսկաստանից. Արտաքին լուրեր. ԽԱՌՆ
ԼՈՒԻՐԻ. Մանրակար. ՀՅՈՒՍԳԻՐՆԵՐ. ԹԱՅ-
ՏԱՐԱՊՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՑ ԶՐՈՑՑ

Նորից աղէտ մեր երկրում...
Նորից ձմեռայն ցուրտ երկնքի տակ մարդ-
կային հասաչանքներ, արտասուք, և դիակ-
ներ, դիակներ...
Ինչ մէկը չը մոռացված գալիս է միւսը:
Ինչ մեր յիշողութեան մէջ են Ախալքալաքի
գլուխի աւերակները, և ահա Շամախին գա-
լիս է մեզ մոռացնել տարւ նրանց:

Եթէ կար մեզ համար մի անհրաժեշտ ճշմար-
տութիւն, դա այն էր, որ մենք կանգնած ենք
հաստատուն հողի վրա: Բայց այժմ այդ ճշմ-
արտութիւնն էլ խախտվում է: Վերջին երեք
տարիները ցոյց են տալիս, որ մեր հողն էլ
զայտնել է անկայուն: Խախտաւ, երբեք Մտա-
ւոր երեքուսններ, մտաւոր անհողութեան վնաս-
ները, աւերակները մենք չէինք տեսնում: Բայց
այս քննութիւնը գալիս է մեզ ցոյց տալու, թէ
ինչ գործախուժիւն է հաստատուն հողից զրկ-
վելը:

Այո, ահա լի աղէտ նա շարունակում է մեզ:
Մանր մուր շահերից ու ձգտումներից կազմ-
ված մեր կեանքը նուազած է այդ անակնկալ
հարուածի տակ: Նա համարեա կանգ է առել,
նրա մէջ լայն, ալիւնայի մի շերտ մտաւ...
Երբեք տակ մնացած մի ամբողջ ժողովուրդ
է դա, բաղկացած տանեակ հազարաւոր հո-
գեկներից, աների վրաստակների մի անուն դաշտ
է դա, որի մէջ թաղված են հազարաւոր մար-
դիկ: Ան ընդհանուր տեսարան է: Բայց նա ու-
նի մանրամասնութիւններ, որոնք սարսուռ են
աղբում:

Եւ ահա լի, արիւնոտ շերտը ձնուած է մեզ
իր անտանելի ծանրութեամբ: Նա տանջում է
մեր խլում է մեր ամբողջ ուշադրութիւնը,
մեր մեջ է ապրի մեզ: Ի՞նչ է մեր որոնածը,
ինչ ենք ուզում որ լինի: Գիտենք, որ ընու-
թեան դէմ կուրել չենք կարող: Գիտենք, որ պա-
տասարների դէմ մարդը ոչինչ չունի, բացի
թող կամ ընկած գլխից և փխրուն ու անօգ-
նակաւ կրծքից: Բայց և այնպէս, որոնում ենք
մի բան. մեզ հարկաւոր է մի յենակէտ՝ վայր
լինելու համար: Մենք մեր սրտի համար մը-
թիւթարութիւն ենք պահանջում:

Մին է այդ յենակէտը, որն է այդ միջիթա-
րութիւնը:
Մի գիտակցութիւն, որ ցոյց տար մեզ, թէ
թնութեան հարուածների տակ միայն մեր խեղճ
դուրը, մեր փխրուն կուրծքը չեն զրկւած: Մի
գիտակցութիւն, թէ մենք այդպիսի հարուած-
ների տակ էլ ունենք մեր սեփական ոյժը, մեր
մարդկային կարողութիւնը:
Եւ ահա նայում ենք մեր շուրջը: Սոսկալի
աղէտը որքան աւերակներ է գործել Շամա-
խում. Բայց մի և նոյն ժամանակ որքան գե-
ղեցիկ տեսարան է բաց արել մեր շուրջը: Մենք
տեսնում ենք, որ մենք մարդ ենք եղել, տե-

նում ենք, որ գիտենք սիրել միմեանց, օգնել
միմեանց:

Հաւաքվում են մարդիկ, աշխատում են Ե-
րանդով, դէս ու դէն վազում, դիմումներ են
անում. նիստեր, խորհրդածութիւններ, լայն
ծրագիրներ կրակոտ գործունէութիւն...

Անավոր բան չէ մեզանում այդ իրարանցու-
մը: ամեն օր մենք տեսնում ենք նրան և չենք
զարմանում: Որովհետեւ գիտենք, որ կեանքը
կուր է, որ մարդիկ այդպիսի թախում ու կրա-
կով գործելու միջոցով միայն կարող են իրանց
անձնական շահերը պաշտպանել, իրանց բարե-
կեցութիւնը հաստատել: Բայց այժմ:

Այժմ սովորական, առօրեայ երեւոյթը չէ:
Այժմ չը կայ շահ, այժմ անձնականութեան
անկ մարդկայնութիւնն է հանդէս եկել: Գոր-
ծում են յանուն մարդկութեան, յանուն եղբայ-
րութեան: Իւրաքանչիւրը պատիւ է համարում
ճանաչել այդ սուրբ գործին: Այս, ինչպէս փո-
խել, փափկացրել է աղէտը մարդկանց: Նայե-
լով նրանց, կարելի է մոռանալ կեանքի դառ-
նութիւնը: Նայելով այդ կրակոտ գործունէու-
թեան, կարելի է մի քոյէ հաւատալ որ իրողը
են մեր աշխարհը անուանել արտասուքների
հովիտ: Լայն բացվել է մարդկային սիրտը, այլ
ևս չեն մերժում նուէյներ տալը, այլ ևս սակարկու-
թիւն չեն անում: Դժբախտութիւն է
— պէտք է տալ, պէտք է շտապել: Եւ այս
պարտաւորութիւնը շատ լաւ հասկանում են
ամենքը— կրթվածը և աղէտը, հարուստը և
աղքատը:

Գանի մեծ սրտեր, քանի հանձարներ քարո-
զել են մարդասիրութիւն, եղբայրութիւն: Ինչ
որ ժամանակ էր, երբ կեանքի օրէնք էր հրա-
տարակցում՝ «ինչ ուզում ես, որ ուրիշները
քեզ անեն, նոյնն էլ դու արա նրանց»:

Եթէ այժմ մարդասիրութեան, եղբայրու-
թեան քարոզիչները դուրս գային իրանց գերեզ-
մաններից, որքան պիտի պայծառանային նրանց
նահատակ, տանջված դէմքերը: Նրանք պիտի
բացազանային. «Գտանք, վերջապէս գտանք»:
Եւ այդ գտածը այն պիտի լինի, ինչ նրանք
այնքան որոնում էին իրանց կեանքում և չէին
գտնում— սիրտ, մարդկային սիրտ:

Ո՞րքան հրաշալի է այժմ այդ սիրտը: Նայե-
ց՞ք, երէկ, քանի զեռ երկրաչափ չը կար, այդ
հրաշալի սիրտը կրող մարդը պատրաստ էր կե-
ղեքի հէնց այն մարդուն, որ այսօր աղէտի
գոհ է, թաղել է աւերակների տակ իր ընտա-
նիքը, իր ամբողջ կարողութիւնը: Երէկ, քանի
չը կար երկրաչափը, այս խեղճ մարդը ոչինչ
ազդեցութիւն չէր թողնի մեզ վրա, իսկ այսօր
մեր արտասուքն է գրգռում, և մենք բայ
ենք անում մեր դիրկը ու ասում ենք նրան.
«Եղբայր ենք, մարդ ենք երկրաւոր»:

Ի՞նչը մեր մէջ այնպիսի հրաշք գործեց:

— Գործախուժութիւնը, աղէտը: Դժբախտ չը լի-
նէր մարդը, մենք և նա միմեանց դէմ միմիայն
սրած առամներ և ծուռտող ձանկեր կունե-
նայինք: Իսկ այսօր, երբ նա մի թշուած արա-
րած է, մենք նրան պատրաստ ենք պաշտել
իրեւ մարդու...:

Ահա, ընթերցող, կեանքի առեղծուածը, հա-
նելուկը: Մինչև որ չէ գալիս գործախուժիւնը,
մեր սիրտը անզայ է և կոչու, նրա մէջ գա-
ղանային հակումները պատրաստ են բռնկվել:
Ամեն վայրկեան: Միայն աղէտն է մարդկայ-
նացում այդ սիրտը, միայն սոսկալի գործախ-
ուժիւնն է մեզ յիշեցնում մեր պարտաւո-

րութիւնները, «մոռացված խօսքերը»:

Բայց մի շտապէք լայն եղբայրութիւններ
գործը բերել այս հանգամանքից: Աղէտներով
ու սոսկալի գործախուժիւններով լի է մեր
կեանքը. և սակայն ինչու մեր սիրտը ամեն
օր, ամեն ժամանակ այսպէս չէ, այլքան լաւ,
բարի, մարդկային:

Մտածում էք այս հարցի վրա, և ձեր առջեւ
մի ցուրտ իրականութիւն է բացվում: Երբ
ընտելան է մեզ աղէտ բերողը, մենք այն
ժամանակ մի սիրտ, մի հողի ենք գտնում՝
մարդասիրութիւն ցոյց տալու համար: Բայց
երբ աղէտները մեր ձեռքի, մարդկային ձեռքի
գործ են, այն ժամանակ սառն ենք և անտար-
բեր:

Գտնք հէնց նոյն Շամախին: Այսօր երկրա-
չափի գործած աւերակների վրա մի գործախու
մարդ է նստած, և մենք նրա համար պատ-
րաստ ենք ամեն ինչ անել: Բայց մի թէ՛ նոյն
Շամախում երէկ, անցեալ օրը, երկրաչափից
առաջ, չը կային նոյնպիսի գործախու մարդիկ:
Կային, ի հարկէ, բայց մենք լուռ ու անտար-
բեր անցնում էինք նրա մօտով, մինչդեռ կթէ
մօտեակայինք նրան, խուսցնէինք, նա կը պատ-
մէր մի այնպիսի աղէտ, որ թէ՛ ևս փոքր չա-
փերով, բայց մի և նոյն թշուառութիւնն է
կազմում:

Մենք ասում ենք. «հաց ու անկողին չունեն
երկրաչափից վնասվածները, շտապէք ուղար-
կենք նրանց հաց, տաք չոր, օգնութիւն»:
Եւ շտապում ենք: Բայց ամեն օր, ամեն քոյէ
մեր շուրջը մարդկանց մի ահազին բազմու-
թիւն տանջվում, կտրուկում է նոյն պակա-
սութիւններից, իսկ մենք ոչ միայն չենք շտա-
պում, այլ ևս հաւատացած ենք, որ չը պէտք
է շտապել:

Մեր ձեռքը մի գոհ է ընկնում: Խնայել մենք
չը գիտենք, և իրողը գործախու իր մարդկայ-
ին լեզուի ամբողջ կարողութիւնը լարում է,
որ հասկանանք մեզ, որ եթէ մենք չը խղճանք,
եթէ մի քիչ կամայ չը ձնչենք նրան, նա չը թ-
քախուսներից գործախու կը լինի, նա կը մնայ
փողոցում, իսկ նրա ընտանիքը սովից կը մեռ-
նի: Մենք այդ ոչինչ ենք համարում, մենք
գործախուսացնում ենք մարդուն, մարդկութեան
չրճանից գործը զրոյս, թոյլ տալիս, որ նա
ապրի իրեւ քաղցած շուռ: Մի օր մեզ լուր
են բերում, թէ այդ իսկ մարդը երկրաչափի,
հրեանի, հեղեղի գոհ է դարձել. և մենք ցնց-
վում ենք, մենք համաձայնվում ենք, որ պէտք
է նրան օգնել:

Աղէտներ... Գանի քանի աղէտներ կան մեր
շուրջը բոլորով: Գանի անը կան, որոնք ա-
ւերվել են մի մի երկրաչափից, այնպիսի երկ-
րաչափից, որ ստորերկրայն ոյժերից չէ առա-
ջանում, այլ մարդու գաղանային սրտից: Զո-
ներ— որքան կանխաբ. նրանք ամեն տեղ են,
նրանք ամբողջ օրը աչքի առջեւ են ման գա-
լիս մեզ հետ, քաղվում են մեզ, իմաց են տա-
լիս, որ անբարեւոյ զոհներ են: Բայց ոչինչ: Մենք
անհանդուստութիւն ցնցում չենք զգում նոյն
ակ այն ժամանակ, երբ մեր ոտը դիպում է
այդպիսի գոհերի դիակներին:

Բագուում այժմ մեծ գուժարներ են ժողով-
վում երկրաչափից վնասվածների համար: Բայց
նոյն Բագուում արհեստաւորների, բանուորների
մի ահազին բազմութիւն մնացել է անանց
գործի, քանդված, քարուքանդ դարձած: Եւ ո՞վ
է ձեռք մեկնում նրանց— Ոչ ոք:

Պարզ է, ուրեմն. մեզ հարկաւոր են ընու-
թեան աղէտներ, այնպիսի սարսուռ աղբող
դէպքեր, երբ պատճառը մենք չենք, երբ մենք
չենք զգում որ եւ է պատասխանատուութիւն:
Այդ ժամանակ մենք հրապարակ ենք հանում
լայն, մարդասէր և եղբայրասէր սիրտ:

Գեղեցիկ է, այն, այդ սիրտը: Ուրախութեան
արտասուքներ են գրգռում ուշադրութեան այն
արտասուք նշանները, որոնք այնպիսի գեղեցիկ
առատութեամբ երեւան են գալիս ամեն օր և
որոնց առարկան զոհներ, ողբալի շամախցի-
ներն են: Մարդու սիրտը լցվում է անհուն
հարատութեամբ, յիշելով որ ինքը մարդ է:
Աշխարհը երեւում է վարդազոյն, գեղեցիկ,

ժպտուն. կարծում են թէ մեր երկնքի տակ
չեւ կանգնած, այլ մտել են մի փառանկ տա-
ճար, որտեղ ամեն կողմից սուրբեր և հրեշ-
տակներ են նայում քեզ:

Բայց այդտեղ էլ, այդ տաճարում էլ, չեն
կարողանում չը յիշել, որ զեռ անկատար է,
զեռ կիտաւ-պատ է մարդկութեան սիրտը:
Նրան հարկաւոր են ցնցումներ, ահալի հրա-
բուղիներ, այդ ժամանակ նա զեղեցկանում է,
փայլում է առաքինութիւններով: Մինչդեռ մեր
սովորական կեանքում, մեր մոխրազոյն իրա-
կանութեան մէջ, հարիւրաւոր ու հազարաւոր
փոքր, բայց նոյնքան դառն ցնցումների, ան-
ձայն, բայց նոյնքան աւերիչ հրաբուղիների
առաջ նա սառն է, անզուրկ, գաղանային:

Եւ ինչ: Մի թէ մարդկային սրտի այս սոնը
յաճախ տեսած լինելու համար հարկաւոր է
ցնցակալ, որ ընտելեան աղէտները շուտ շուտ
կրկնվեն:

Ո՞չ, ընթերցող, ևս այդպիսի բան չեմ հա-
մար բաժակի մարդիկ անգամ անցկացնել: Ինչ հա-
մար հազարապատիկ լաւ կը լինէր, եթէ Շա-
մախին անվնաս և կանգուն մնար մեր կեղե-
քի իրականութեան մէջ, բան աւերակների
կոյտ գտնաւորվ հանդէս բերէր մարդկային
սրտի մեծագործութիւնը...

ԵՐԿԻՐԱՇԱՐԺԻՑ ՎՆԱՍՎԱՍՏԵՐԻ ՕԳՏԻՆ

Երկրաչափի վնասվածների օգտին ստացանք
հետեւեալ նուիրատուութիւնները. 1) բժիշկ Յ.
Գապարեանից—50 ռուբլի, 2) Չ. Ուրիկանից
—3 ռ., 3) օր. Երեցեանից—1 ռ. և մի կապոց
չորեղէն. 4) պ. Նաղիկեանից—3 ռ., 5) Սարգիս
Պետրոսեանից—5 ռ., 6) Մ. և Յ. Տուրկեսան-
ներից—5 ռ. 7) Ներսիսեան դպրոցի 13 ուսու-
ցիչներից—30 ռ., 8) Չ. Պապարեանից—1 ռ., Ա.
Ստեփանեանից—1 ռ., Ա. Տէր-Լիկորոսեանից—
մի կապոց չոր. ընդամենը 99 ռուբլի, իսկ նախ-
կին ստացածի հետ միասին 378 ռուբլի և 7
կապոց չոր:

ԱԿԱՆԱՏԵՐՆԵՐԸ ՇԱՄԱԽՈՒՄ

Բագուի «Каспий» լրագիրը հաղորդում է, որ
իր քաղաքի մարդկային կան փետրվարի 5-ի
համար: Բոլոր ակամատները համաձայն են
մի բանում, այն է, որ անհրաժեշտ էին տեղի
կոմսիտո կերպով պեղումներ անել: Մինչև
փետրվարի 5-ը աւերակներից հանված բոլոր
դիակների թիւն է 2,200,— մի և նոյն ժամա-
նակ փորուածքներ անելիս հանդիպում էին
ևս «կիտաւ» մարդիկ: Կասկած չը կայ, որ
եթէ փորուածքներ անելի իրանդոտ կատար-
վէին, շատերին կարելի կը լինէր ազատել: Ներ-
կայումս պեղումներ կատարում են մասնաւոր
անձինք և մասամբ զինուորները, բայց այնպի-
սի աննշան չափերով, որ, օրինակ, վեց բաղա-
նիքներից պեղումներ կատարվել են միայն եր-
կուսի մէջ, իսկ մնացած չորս բաղանիքները
մնում էին, ինչպէս որ կային: Բագուից քիչ
մէկի մէջ պեղումներ անելու ժամանակ, ի միջի
այլոց, գտնվեց մի աղջիկ, որ կանգնած էր ու-
րապի տակ: Հէնց որ անցըր մարքեցին նրա
առաջ, նա իսկոյն սկսեց վազել, այնպէս որ
նրան դժուարութեամբ կարողացան բռնել: Մի
մասնաւոր տան մէջ մէկ վեց տարեկան աղջիկ
մահից ազատվեց չորսին: Երկու թէ դրամարդիկ,
որին նա կպել էր երկրաչափի ժամանակ: Մէկ
ուրիշ տան մէջ նստած էին սեղանի շուրջը 12
կանաչ մի ինչ-որ հանդէսի առիթով: Նուրա-
չարի հէնց առաջին հարուածը քանդեց այն
տունը, որի մէջ նրանք նստած էին, — բայց նը-
րանց մերձուորները իսկոյն փորուածքներ սկսե-
ցին անել և երկուցեան մօտ ազատեցին 9 կա-
նանց: Հետեւեալ օրը աւերակներից հանցին
և մնացած 3 կանանց, բայց նրանք արդէն մե-
ռած էին: Այս դէպքը ամենից լաւ ապացու-
ցանում է, թէ որքան մեծ նշանակութիւն ունի
շուտափոյթ փորուածքներ անելու: Դժբախտա-
բար, փորուածքներ անելու համար իր ժամա-
նակին չը քաղաքացիները գումարներ, և այդ

պատճառով չընկալանքի գիւղացիները խուսափում էին Շամախի գաղութը բանակու համար Այժմ, ի հարկէ, չէ կարելի յուսայ, որ փրատակների տակ թաղվածները կենդանի մնացած կը լինեն, — խիստ շատ ժամանակ է անցել Պատմում են, որ շատ դիակներ անպէս այսպիսով վաճ են, որ նրանց ճանաչել անկարելի է:

Մէկ ականատես (բուսակար Ռոստոմեան) պատմում է, որ Շամախու շրջականներն արդէն վատեցուցիչ տպաւորութիւն են գործում: Շամախուց դէպի Բագու տանող ճանապարհը լըցված է դժբախտութեան տեղից փախչողներով «Փախտականները» գնում են սայլերով, ձիերի, ուղտերի, էջերի վրա հեծած: Ետտեղ հիւանդ են եւ արանդակված: Այդ բոլորը լուսաւորվում է հրաբուխի ժայթքումով: Ծանապարհի վրա գտնվող մի քանի գիւղերը քանդված են: Շամախու ընդհանուր պատկերը սարսափելի է: Բաղաբի ամբողջ ստորին մասը ներկայացնում է առանձին քարերի մի կոյտ: Բաղաբի վերին մասը հեռուից քաղաքի տեսք ունի, բայց մտից երեւում է, որ ոչ մի տուն չը կայ, որ նշանակուր չափով վնասված չը լինի: Յամեսնայի դէպս մինչեւ անգամ քաղաքի վերին մասի բոլոր տները ստիված կը լինեն վերայինը: Բաղաբի փողոցներով կառքով անցնել անհնարին է, որովհետեւ բոլոր փողոցները լցված են քարերով:

Մանուսանդ վատեցող տպաւորութիւն է թողնում հաց բաժանելու Սովատանդ ազգաբնակիցները կատաղութեամբ յարձակվում է հացով սայլերի վրա. կանայք կռու են սկսում տղամարդկանց հետ մի կտոր հաց ստանալու համար:

Սովից միտոսակ տանջվում են թէ հարուստները եւ թէ աղքատները: Պ. Ռոստոմեանց եւ նրա ուղեկիցները դեռ եւս իրանց համար ապաստարան չէին գտել, որ նրանց դիմաց մի պաշտօնեայ հաց խնդրելով, անբխանքը սովից մեռնում են: Հասարակ ընտելի մասին աւելորդ է անգամ խօսելու: Նրանք ստիված են լինում հացի կտոր խել իրանց նուան սովածների ձեռքից: Պէտք է հող տանել, որ հացը բաւարար քանակութեամբ չըլարկվի: Կարիք է զգացվում վատ եղանակից եւ ցրտից պաշտպանվելու: Քիչ շատ ունեւոր մարդիկ իրանց տների աւերակներից հանել են գորգեր, փարձներ եւ այլն եւ մի կերպ վրաններ են շինել իրանց համար: Իսկ աղքատները ուղղակի փողոցում են մնացել, առանց որ եւ պաշտպանութեան ցրտից: Այդ բանը նրանց ստիպում է գողութեան դիմել: Նրանք շրջում են աւերակների մէջ եւ աշխատում են յափշտակել բոլորը՝ ինչով կարելի է մարմինը պաշտպանել ցրտից:

Կարելի է մեղադրել նրանց: Ընդհանուր թշուառութիւնը այդտեղ եւս յեղափոխութիւն է գցել մարդկանց յարաբերութիւնների մէջ: Հարուստը սկսել է հասկանալ աղքատին, կուշոր քաղցածին, — մի բան, որ, ինչպէս յայտնի է, տեղի չէ ունենում սովորական ժամանակ:

Սակայն ականատեսները մատնացող են աւտում շամախեցի նախկին հարուստների մի տեսակ օտարտի հողեկան գրութեան վրա: Նրանք մինչեւ այժմ չեն կարողանում հաշտվել իրանց կատարեալ անակութեան մտքի հետ:

— Այդ ինչպէս է, չըկված հարցնում էր պ. Ռոստոմեանցին մի թշուառական. — Երէկ ես դեռ կէս միլիոն կարողութիւն ունէի, իսկ այժմ ես ուտելու հաց չունեմ:

Եւ դրա նմանները այժմ հարիւրաւորներ կան: Երէկ նրանք իրանց բարբորութիւնը անգործելի էին համարում, իսկ այսօր նրանք... ուտելու հաց չունեն:

Աղէտը դատ անպակելի էր: Ոչ ոք ոչինչ չէր մտածում եւ չէր սպասում: Վերելում մենք արդէն սասցինք, որ 12 կանանց երկրաշարժը վրա հասաւ ինձոյքի սեղանի շուրջը: Մէկ ուրիշ տան մէջ առաստալը սկսեց քանդվել նշանվողների գլխների վրա, այնպէս որ նրանք հողի կարողացան դուրս վազել փողոցը: Բոլոր ազդեցիկ հայերը թաղաման էին տաճարում, որի շուրջիւ եւ ազատվեցին: Մահմեդականների ամբողջ իզական կէսը բաղանիքներում էր, ուր եւ գտաւ իր մահը:

Մի խօսքով, ամենքը զբաղված էին իրանց սովորական գործերով: Եւ յանկարծ՝ երկրաշարժը մի քանիսներին այն աշխարհը ուղարկեց, իսկ միւսներին մտաղկաններ դարձրեց:

Ի լրումն բոլորի, վերջերս քաղաքում սկսում է տարածվել դիակի հոտ՝ մարդկանց եւ անասունների քայքայող դիակներից: Մեռածները սկսում են սպանալ կենդանի մնացածներին:

Նրանք թաղում են պահանջում: Մանուսանդ աստիվ է հոտը մահմեդականների բաղանիքների մօտ, ուր, ինչպէս յայտնի է, առանձնապէս շատ զոհեր կան:

Վ. Ռոստոմեանը աւերված քաղաքի զանազան կէտերից 80-ից աւելի նկարներ է հանել: Այդ նկարները կը ծախվեն, եւ ստացած եկամուտի 30% կը տրվի ի նպաստ երկրաշարժից վնասվածներին:

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻԹ

Յունվարի 29-ին

Բագուի ծննդական ապաստարանի (РОДИЛЬНИЙ ПРИЮТ) վերատեսուչ բժ. Կաչինսոսկին ինդրամատոյց է եղել, որ հարկն է, որ թոշուարովի ապաստարանին կից հիմնել մանկաբարձական կուրսեր, առաջին եւ երկրորդ կարգի մանկաբարձուհիների համար պահանջվում է պրոգնոզիայի, իսկ երկրորդ կարգի համար լոկ գրագիտութեան ցենք:

Պէտք է ասել, որ Բագուի ծննդական ապաստարանը բաւական առատ նիւթ է ներկայացնում սովորողների համար. անցեալ տարի, օրինակ, 1029 ծննդաբերութեան դէպք էր եղել, չը հաշված երթեւեկ հիւանդներին, որոնց թիւը նոյնպէս մեծ է: Այնպէս որ արժէք օգտվել այդ առատ նիւթով ուսանողուհիների համար:

Տեղական բժշկական վարչութիւնը եւ քաղաքային ինքնավարութիւնը համակրանքով վերաբերվեցին դէպի այդ միտքը եւ նոյն իսկ, առաջինի թոշուարութեամբ, մինչեւ իրաւունք ձեռք բերելը, այս փետրվարից արդէն սկսվելու է կանոնաւոր դասաւանդութիւն: Այժմ արդէն 7 աշակերտուհի կայ, բոլորն էլ հրէուհիներ: Ցանկալի է գրաւել եւ տեղական տարրը (հայեր, վրացիներ եւ թուրքեր), քանի որ մեր գիւղերում կրթված տատմէրների մեծ պահանջ կայ: Կուրսերի վարիչները, անշուշտ, տեղական պահանջներին համաձայն, ընդունելութեան ժամանակ առաւելութիւն պիտի տան տեղական ստորին:

Այս տարի կընդունվեն 15 հոգի: Առարկաների աւանդութիւնը բաժանված է հետեւեալ կերպով. բժ. Ռազոսով — մարմնակազմութիւն եւ ընթացութիւն, բժիշկ Կալինսոսկին — մանկաբարձութիւն, բժ. Օրբանտ — կանանց հիւանդութիւններ, բժ. Գ. Սարգսեանց — նորածնների ինստիտուտութիւն եւ նորածնների հիւանդութիւններ, բժ. Բ. Տէր-Վարապետեանց — վերնաշնային եւ կաշուի հիւանդութիւններ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մենք ստացանք Պարիզում հրատարակվող «Բանասէր» հանդէսի այս տարվայ առաջին համարը: Խմբագիր-հրատարակիչ Կ. Բասմաջեան մամադիտական «Բանասէր» հանդէսը վերածել է այս տարվանից գրական եւ դիտական ամսագրի, որի մէջ բացի մամադիտական յօդուածներից, վերաբերեալ բնութագրերին եւ արձանագրութիւններին, կը լինեն նաեւ ընդհանուր գրական եւ ուսումնական յօդուածներ: Իր ժամանակին, երբ ամսագրի բովանդակութեան եւ ուղղութեան հետաւելի մօտ ծանօթանալու առիթ կունենանք, կը յայտնենք մեր կարծիքը:

Փետրվարի 8-ին, թիֆլիսում վախճանվեց, 72 տարեկան հասակում, շուշեցի Ստեփան Իւզբաշեանց: Հանգուցեալը ազդեցիկ մարդ է եղել Շուշում եւ բաւական աչքի ընկնող գեր է կատարել իբրեւ հասարակական գործիչ: Իր ուսումը Ստեփան Իւզբաշեանց ստացել է Շուշու գաւառական դպրոցում, որ մի ժամանակ մեծ դեր էր խաղում Ղաղաբաղի ժողովրդի կեանքում, որովհետեւ այդ դպրոցից դուրս եկան մի շարք անձինք, որոնք բաւական աչքի ընկնող գեր կատարեցին պետական զանազան պաշտօնների մէջ: Իրանք ամենքը առաջ եկան ինքնավարութեամբ, զարգացնելով այն համաստ պաշարը, որ առել էր իրանց գաւառական դպրոցը: Եւ Ստեփան Իւզբաշեանց կենդանի օրինակ էր, թէ ինչ կարող է անել ինքնուրոյնութիւնը: Նրան տեսնողը կը կարծէր, որ նա մի հասարակ, գուցէ եւ տգէտ մասնակ էր, բայց Ստեփան Իւզբաշեանց երկար ժամանակ եւ մինչեւ իր մահը յայտնի էր ամբողջ Ղաղաբաղում իբրեւ հմուտ փաստագրան, օրէնսդէս եւ մանաւանդ հմուտ ցիլիլիսու նալա գիտէր ժողովրդի հոգեբանութիւնը, դրանով եւ պէտք է բացատրել այն հանգամանքը, որ ամբողջ Ղաղաբաղում, թէ՛ հայ եւ թէ՛ թուրք ազգաբնակչութեան մէջ, նա

լայն ժողովրդականութիւն էր վայելում: Իբրեւ որոշ եւ հաստատ աշխարհաշայեացքի տէր մարդ, նա գործունեայ մամակցութիւն ունէր իր հայրենիքի հասարակական եւ ազգային կեանքի մէջ. նա եղել է Շուշու հայոց թեմակա ն դպրոցի, հայոց օրիորդական դպրոցի հոգաբարձու երկար տարիներ, մինչ է եղել այն անձերից, որոնք աշխատեցին բանալ տալ Շուշում բէյական դպրոց, մտցնել քաղաքային ինքնավարութիւն, մամակցել է զանազան բարեգործական հաստատութիւնների: Նրա ջանքերով Տաթևի հայոց վանքը կարողացել է վերահաստատել իր իրաւունքները վէճի տակ ընկած կալուածների վրա: Վերջապէս նա որոշ համակրելի դիրք բռնեց, իբրեւ հոգաբարձու եւ քաղաքացի, այն տարածալսութիւնների ժամանակ, որոնք ծագեցին Շուշում մի քանի տարի առաջ թեմական դպրոցի առիթով ժողովրդի եւ հոգեւոր իշխանութեան մէջ: Իր հայրենի քաղաքի առաջադիմութեան գործը միշտ սըրտին մօտ ընդունելով նա եւսանդուն կերպով գործել է, օգտվելով իր դիրքից եւ ազդեցութիւնից: Վերջին տարիները հանդուցեալը մեր մէջ հաստատված կղերական կարգերից եւ հակաժողովրդական ուղղութիւնից գծոյններից մէկն էր եւ իր ձայնը լսեցնել էր տալիս ամեն տեղ, ուր հարկաւոր էր վերջապէս հանգուցեալը մի ամբողջական ինքնուրոյն տիպ էր, կամակրելի ընդհանուր անամբ, մի տիպ, որ ղժբախտաբար, հետզհետէ անհետանում է մեր մէջ:

Ստացանք Ժ. Մուրիէի խմբագրութեամբ հրատարակվող Le Caucase Illustré հանդէսի 1901—1902 տարվայ առաջին համարը: Ինչպէս միշտ, այս անգամ եւս այդ համարը հրատարակված է չընդ, ընտիր եւ զեղեցիկ պատկերներով, որ միանգամայն պատիւ է բերում հրատարակչին:

Փետրվարի 7-ին վախճանվեց թիֆլիսում առաջին արական գիմնադպիչ ուսուցիչ Ա. Պրիսեօլով, որ 16 տարի շարունակ ուսուցչական պաշտօն էր վարում այդ ուսումնարանում: Հանգուցեալը ջերմ կերպով մամակցում էր եւ զանազան հասարակական գործերի ու ընկերութիւնների: Ա. Պրիսեօլով երբեմնապէս աշխատակցում էր եւ տեղական ուս. լրագիրներին:

Ուրբաթ, փետրվարի 8-ին, թիֆլիսի արտիստական թատրոնում տեղի ունեցաւ Հաուպտմանի «Միքայէլ Կրամեր» պիեսի ներկայացումը: Վատ եղանակի պատճառով հաւաքվել էր թատրոնում քիչ բազմամանի Հաուպտմանի այդ նոր պիեսը նպատաւոր տպաւորութիւն չը թողնէր: Առաջին երեք գործողութիւնը հետաքրքրական էին եւ բեմական, իսկ վերջինը ազդում էր ծանր, չէր հետաքրքրում եւ կրում էր դեկատենդութեան կիւր իր վրա: Միքայէլ Կրամերի գերը անողութեամբ կատարեց Բաֆայէլ Առչէլէտ, իսկ նրա որդու, Արսոյի գերը՝ Պեղիպա նոյնպէս բաւական աչող: Միւս դերակատարները անբաւարար էին:

Ախալքալաքի երկրաշարժից վնասվածներին օգնող մամադիտովի նիստը, որ նշանակված էր երէկ, յետաձգվեց մի ուրիշ օրվայ, որի մասին ժամանակին կը զեկուցվի:

Երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրութիւնը ծրագրել են կազմել բէֆօրմների ենթարկելու գիւղատնտեսական միջնակարգ եւ ստորին ուսումնարանները: Մտադրութիւն կայ աւերակներու եւ աւելի բարձրակողմանի դարձնելու այդ ուսումնարանների ուսուցման ծրագրի՝ տալով աւարտողներին այն իրաւունքները, որ ունեն այժմ բէյական դպրոցներում աւարտածները:

Ե. Ֆ. Նիւրլինգ, որ Լ. Մարկովի փոխանակ նշանակված է թիֆլիսի առաջին արական թիֆլիսի եւ ստանձնեց իր պաշտօնը:

Ներքին գործերի մինիստրութիւնը մօտ օրերումս հաստատել է էժանտիլին եւ ձրի ճաշարանների ու թէյտոտոնների թիֆլիսի ընկերութեան կանոնադրութիւնը:

Յինանսների մինիստրութեան մէջ, ինչպէս հարորդում են մայրաքաղաքի լրագիրները, շուտով կը քննվի մի հարց, որով մտադրութիւն կայ թոյլ տալ աւելորդական միջնակարգ ուսումնարաններն աւարտած երիտասարդներին ոչ

միայն մտնել մամադիտական բարձրագոյն դպրոցները, այլ եւ համալսարանների մի քանի բաժանմունքները: Առ այժմ երիտասարդներին թոյլ է տրվում մտնել Մոսկվայի գիւղատնտեսական ինստիտուտը:

ԱՍՍԱԲԱԴԻԹ մեզ գրում են. «Այս օրերս այստեղ եկաւ դերասան պ. Վրոյրը, որի նպատակն է հայկական մի քանի ներկայացումներ տալ: Առաջին ներկայացումը հաւանական կայանայ հիւնդաբի օր, փետրվարի 7-ին: Ներկայացումը կը արվի վերջապէս Երևանում: Թատրոնում խաղացվելու է Դժ-Գրիգորի կոմեդիան: Յանկապ պ. դերասանին աչողութիւն:

ԱՐՏԱԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻԹ

Մարտի 14-ին

Նոր տարվայ առիթով Ղալաբար գիւղի «Հայկազեան» երկսեռ դպրոցների ուսուցիչ պ. Ա. Թադէոսեանի նախաձեռնութեամբ, նոյն գիւղի նորակառոյց թատերասրահում տրվեց աշակերտական հանդէս եւ ներկայացում յօգուտ նոյն թատերասրահի Դեկտեմբերի 31-ի գիշերը ներկայացում տրվեց տղամարդկանց համար, իսկ յունվարի 1-ի գիշերը՝ կանանց համար: Առ մասանցի հայ կնոջ հարեմական դրութիւն դեռ եւս արգելում է նրան տղամարդկանց հետ միտեղ նստել այդպիսի հանդէսներում: Երջկայ գիւղերից էլ բաւական թւով մարդիկ ներկայ էին նոյն հանդէսին:

Հանդէսը երկու մասից էր բաղկացած. առաջին մասը զուտ մանկական էր, իսկ երկրորդ մասը աշակերտական, որից յետոյ ներկայացրին չորս հատ մանկական կատակերգութիւններ: 1) «Ոսկի ձկնիկ», 2) «Գաղանաւոր կամ կեռասի գողեր», 3) «Սեւ կատու» եւ 4) «Երկու խուլեր»: Հանդէսը եւ ներկայացումը անցան սպասածից շատ աչող. հասարակութիւնը ոչեւ արթնած վարձատրեց աշակերտներին ու աշակերտուհիներին բուն ծափահարութիւններով: Յետոյ զրվեցին կենդանի պատկերներ եւ վերջում պ. Ա. Թադէոսեանը ճառ խօսեց, որի բովանդակութիւնն էր զխաւորապէս Սարմատեցու անտարբերութիւնը դէպի կրթական գիւղական վերվումը չընտեց, որ սարմատեցու տնտեսական քայքայման միակ պատճառը կրթութեան բացակայութիւնը ու կրթացած կեանք վարել է. ապա յորդորեց, որ աշխատեն բոլոր գիւղերում շատ քիչ կանոնաւոր դպրոցներ ունենայ, ու մատուց սեռեղ կրթվելով կարողանայ աշխատարար դրութիւնից ազատվել: Ծանր ընդունվեց հանդիսականների կողմից անվերջ ծափահարութիւններով: Հանդիսականները ցրվեցին շատ գոհ արտով: Ինչպէս լսեցի, այդ հանդէսից զուտ արդիւնք է մնացել 45 թիւում (մօտ 90 բուրլի):

Իսկապէս կրթական գործը այստեղ՝ Սալմաստում շատ աննախանձելի դրութեան մէջ գտնվում: միայն Ղալաբարն ու Հաֆթուան ունեն շատ քիչ կանոնաւոր դպրոց. իսկ մնացած բոլոր գիւղերը կամ բոլորովին զուրկ են դպրոցից, կամ թէ՛ չէ՛ ունեն եւ կատարվում է մի տղէտ տիրացուի կամ տէրտէրի ձեռքը: Ցաւալի է տեսնել այդ գիւղերում, թէ ինչպիսի հարիւրաւոր մանուկներ անխնամ օրն ի բուն փողոցներում թափառելով, կորցնում են իրանց մատաղ հասակի վատ գարունը:

Մինչեւ օրս Ատրպատականի թեմական առաջնորդը Սալմաստի այդ դրութեան վրա ուշադրութիւն չէ դարձրել. յուսով ենք, որ այդ անհետեւ տեղին կրթական գործը նա ամենակարեւոր խնդրներից մէկը դարձնելով, կաշխատէ բազմացնել Սալմաստում ուսումնարանները թիւը, որտեղ հարիւրաւոր մանուկների մատաղ հոգին կրթվելով, պատճառ կը դառնայ նրանց այդ խաւարի եւ տգիտութեան միջնորդութիւն:

ԱՐՏԱԿԻՆ ԼՈՒՐԵՐ

«Hamburger Nachr.» լրագրի Լճոյնի թիւ թիվից գրում է, որ այս օրերս տեղի ունեցնելու համայնքների ժողովը Լճոյնում, որ կազմակերպել է սիւնիստների անգղիական դպրոցներից: Այդ ժողովը արժանացրեց նախկին Սալմաստի խաղաղութեամբ: Անգղիական գրող Նոյ Կլեյնը մի համակրական նամակ ստացվեց, որովհետեւ նա անձամբ չէր կարող ներկայ լինել ժողովին: Նա աչողութիւն է ցանկանում ժողովին, որը ձգտում է մի նոր ազատ քաղաք ստեղծել Մեծ Բրիտանիայում: Կալածված ժողովրդի համար Մեծ Բրիտանիայում թիւն գործից իր ճատով գրող Ցանց

որն ասեց, թէ հրեական գաղթականա-
րէնկերութիւնը Անգլիայում միայն այն
ժամանակ աշխարհի շուկայում, որովհետեւ
այն ոչինչ որոշ ճիշդութեամբ չուներ, այդ պատ-
ճանալով ոչինչ օգուտ չը տուէրին շահա-
գործող գէլիի Պալեստին, անկախակազ կը շինէի
պարտաւոր շահագործող, փողն էլ ան-
կախակազ կը լինի, եթէ տեղի չուներայ հրեական
գաղթողի ֆիզիկական եւ բարոյական վերա-
ճանալովը:

Վիկտոր Հիւզօյի ծննդեան հարիւրամայ
ճիւղերն առնելու ծրագիրը, ինչպէս հարոր-
դում են Պարիզի լրագիրները, արդէն կազմված
է Պարիզ քաղաքը տնտեսաբանութիւնների համար
ճանաչանալի է 200,000 ֆրանկ, իսկ կա-
նախարարութիւնը իր կողմից 80,000 ֆրանկ
ճանախարարութիւնները կը սկսվեն փետրվարի
ճանախարարութիւնները (ընդհանուր օրը) եւ կը շա-
նայնակվեն մինչև մարտի 2-ը: Փետրվարի
ճանախարարութիւնները պաշտօնական հանդէս
միջնորդների եւ պատգամաւորների ներկայու-
թեանը Այդտեղ կը կարգադրեն ճանաչու-
թեանը: Այդտեղ կը կարգադրեն ճանաչու-
թեանը եւ զրամատիկական թատրոնների գերա-
տանները կը կարգադրեն հատուածներ Վիկտոր-
Հիւզօյի գրուածքներից: Այս տեղի կուենայ
պատգամաւորների արձանի բացումը այն հրապար-
տաւորութեան արձանի արձանը: Այդ նոյն
կի օրը, որ կրում է նրա անունը: Այդ նոյն
կի օրը երեկոյան տեղի կուենայ հանդիսաւոր
պարտաւորների խորհրդի շինութեան
տեսակ օրը, քաղաքային խորհրդի շինութեան
տեսակ օրը, կը կատարվի օտարերկրայ պատգամա-
ւորների ընդունելութիւնը եւ պարահանդէս-
տեսակ օրը: Մարտի 2-ին, Vosges հրապարակի
Վիկտոր Հիւզօյի, որտեղ պարտաւոր էր բա-
նախարարը, կը կազմակերպվի ժողովրդական
տնտեսաբանութեան պարտաւոր թատրոններով, ե-
րամատիկական եւ հրապարակական:

ԻՍԼԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Մ Ա Ն Բ Ա Ն Կ Ա Ր

Որքան ծանր էին այս վերջին տասն օրերը:
Հեռագիրները եւ թղթակցութիւնները ամեն
օր պատմում էին նորաստարապետների երկրա-
շարժի բնուիցը:
«Հաղթ մարտ փլատակների տակ»:
Այդպէս էր ասում մեր առաջին հետազոտը:
«Ինչ էր ճիշտ է, հարցնում էինք մենք
միտանցից»:
«Երևի չափազանցած է, հաստատում
էինք միտանց»:
Այժմ գիտնեք, որ գծախտարար այդ թիւը
ոչ միայն չափազանցած չէ, այլ փոքր է իրա-
կանութիւնից: Ամեն օր զիտներ են հանվում
փլատակների տակից: Եւ ո՞վ գիտէ, գուցէ նախ-
կին թիւը կրկնապատկվի եւ ետապատկվի:
Այդքան մարդկային գոնէր: Սարտափելի զբո-
րանքները:
Առողջ Շամախի քաղաքից, որ ունէր մօտ
5000 տուն 22,000 բնակիչով, հազիւ մնացել են
մի քանի տներ անմասա: Բոլորը խորտակվել է
եւ կործանվել:
Նոյն տակալի վիճակին են ենթարկվել Շա-
մախու շրջակայ գիւղերը:
Փլատակների տակ մնացել են շատ տնային
անասուններ եւ մարդկանց բոլոր գոյքը:
Երկրաշարժից ազատվածները սոսկալի վիճա-
կի մէջ են:
Առանց բնակարանների:
Առանց պատապարանի:
Առանց հացի:
Առանց անկողնի:
Առանց հարուստի:
Բոլորը կորած, բոլորը դարձած աւերի բա-
ւին:
Սարտափ, սուգ եւ սով:
Գնացէք նրանց սիրտները: Գնացէք նրանց
կերակրելու եւ հարցնելու: Գնացէք տկարներին
պաշտպանելու: Գնացէք հիւանդներին բժշկելու:
Անա ինչ է հրամայում մեզ երկրաշարժի ա-
ղէտի ճանքը:
Գնանք այդ բոլորը անելու:
Իսկ ով մեզինց այդ չէ կարող անել թող
այս իր նպատակ փողով, հարուստով եւ կազ-
մակերպելով օգնութեան գործը:
Ան իր քրտիները եւ կոպէսները ձեռք չեն
մտնակցանք, ձեր տուած հագուստից ձեռք չեն
մտնակցի թղթի, իսկ այդ մասը նուէրներից կը
կազմվեն մեծ գուժամբներ, որոնք էական օգուտ
կը տան երկրաշարժից վնասվածներին:
Մի թէ մեզ համար բարոյական մի մեծ ու-
րախտութիւն, վերապէս պարծանք եւ հար-
ուստութիւն չէ այն բանը, որ մենք կարողացանք
օգնել անաղաղաբեկներին եւ վերականգնել
նրանց տնտեսութիւնը:
Սկսակա՛մ:
Միտանց օգնելու ընդունակութիւնն էլ մի
հարստութիւն է, որ պէտք է ձեռք բերէ մեր
երկրը:
Կան էք արդեօք, թէ ինչ անելիք է եւ վնա-
սակար լուրեր են տարածված Շամախում եւ
Բաքուում:
Գտնվել են գուշակողներ, որոնք սուտ մար-
դարութիւններով սարսափ են տարածում ամ-
բարի մէջ:
«Այս ինչ օրը, այս ինչ ժամին լինելու է
սաստիկ շարժ, որ աւելի խիստ պէտք է լի-
նի, քան մինչև այժմ եղածը»:

Մէկը միւսին պատմում են այս տեսակ լու-
րեր եւ միտանց վախեցնում:
«Որտեղից է տարածվել լուրը, հարցնում
էք դուք»:
«Ժողովրդի մէջ այդպէս է խօսվում, պա-
տասխանում են ձեռք Աստուծոյ կան»:
Յուզմունքների եւ սարսափի մէջ գտնվող
ամբողջ զինուորատուութեամբ լսում է այդ
լուրերը եւ աւելի եւս յուզվում:
Եթէ չէք մտազել, ընթերցող, այդպիսի
գուշակութիւններ անվում էին եւ Ախալքալա-
քի երկրաշարժի արհաւիրքից յետոյ:
Այն ժամանակ էլ նշանակված էին օրը եւ
ժամը:
Ի հարկէ ոչինչ չը պատահեց: Գուշակու-
թիւնները մնացել իրեն նախապաշարմունքի
գոյութեան վկայութիւններ, կամ չարամիտ
մարդկանց հարած տոր կատակների ապա-
ցոյցներ:
Ո՞վ է ասում, կարող են կրկնվել երկրաշարժ-
ները: Գուցէ ստորերկրայ այն խորտուները,
որոնք առաջացրին յունվարի 31-ի աղէտը, դեռ
չեն վերջացրել իրանց շարժումները: Բայց դա
բոլորովին ուրիշ հարց է:
Ոչ ոք չէ կարող ոչինչ գուշակել այդ մասին:
Գուշակութիւնները սուտ են, եւ ամեն բան-
իմաց մարդ իր պարտաւորութիւնը պէտք է
համարէ հանգստանել ժողովրդի լարված ջղն-
քը, ցրելով կասկածները եւ երկիւղները:
«Ինչ էք կարծում, Շամախի արդեօք դար-
ձնալ կի վերանորոգվի, թէ նա կը ջնջվի առ
միշտ բնակավայրերի շարքից»:
Այդ հարցը եւ լսեցի շատերից:
«Ինչ կարելի է պատասխանել
կարելի է կարծիք յայտնել»:
«Ես կարծում եմ, ասացի ես, որ նա կը
վերանորոգվի»:
«Ինչպէս, բացառանցից խօսակիցներս:
այս սարսափելի աւերումներից յետոյ»:
«Այո, այս բոլոր թշուառութիւններից յե-
տոյ: Ի հարկէ, եթէ այժմիստարապետն տեղա-
փոխէ վարչական հիմնարկութիւնները ուրիշ
տեղ, այն ժամանակ կը կազմվի կամայականաց
մի ուրիշ քաղաք, որ եւ կը գրաւէ մարդկանց
զինուորային շահագործող շատ շատերը
չեն բաժանվի իրանց օջախից, իրանց հողային
սեփականութիւններից եւ կը փորձեն դարձնալ
բուն ղեկի հին տեղում»:
«Անհատալի է, պատասխանեցին ինձ»:
«Անհատալի ոչինչ չը կայ, առարկեցի եւ:
Շամախի դարերի ընթացքում մի քանի ան-
գամ է քանդվել եւ նորից վերականգնել: Մեզ
յայտնի է, որ 1668 թուին երկրաշարժը թողել
է փլատակների տակ 6—8000 մարդ: Գարաբը
դարձնալ նորոգվեց: Եթէ ընակիչներին մնայ
նրանք նորից կը շինացնեն նրան»:
«Եթէ այդպէս է, նկատեցին խօսակիցներս,
այն ժամանակ պէտք է արգելել այնտեղ բնա-
կութիւն հաստատելը»:
Այդ հարցը մենք չը քննեցինք:
«Ինչ արգելի մասին կարելի է մտածել: Զոկ
բուն է, եթէ պարտաւոր կանոններ մշակվեն
տների շինութեան վերաբերութեամբ, որինսկի
գերազանցութիւն արժի փայտեայ շինութիւն-
ներին, երկաթեայ կապերին»:
Սակայն ինչու՞ն են Շամախու քաղաքները, ին-
չու՞ն են այն հրապարակ, որ նա պահպանել է
շամախեցիների համար:
Եղել էք արդեօք դուք Շամախում եւ Շա-
մախու գաւառում:
Ես եղել եմ մի քանի անգամ եւ կարող եմ
ձեռք ասել հետեւեալը:
Շամախու շրջակայքը մի արգաւանդ եւ բա-
րեբեր երկիր է:
Օրը բարեխառն եւ առողջարար: Աղբիւրները
վճիտ եւ համեղ: Կենսական մթերքները էժան
եւ առատ:
Սաղմանի, Մարտապի, Գիւրջիկանի գլխի-
ները մեծ հոշակ են վայելում: Ուրիշ գիւղե-
րում էլ սկսել են զարգացնել գլխեգործութիւ-
նը: Կարող են ընդարձակ տարածութիւններ
յատկացնել խաղողի վազերի համար:
Չարմախի աղբի տեղ է այդեգործութեան
համար, ասում էր երեւանեան նահանգից Շա-
մախի եկած մի անձն:
«Ինչ կըզմից, հարցի ես»:
«Այտեղ քիչ ծախքով եւ քիչ աշխատան-
քով, բացառեցի նա, ստանում են այսպիսի
արգիւնքներ, որոնք համար մենք մեր տեղե-
րում գործ ենք անում եւ շատ փող եւ շատ
աշխատանք: Այստեղ հողը չեն շրտն, վազերը
չեն թաղում եւ առհասարակ քիչ հողք են
տանում, իսկ գինին ստացվում է պատուական»:
Գիւրջիկան կենսաբի եւ սնտեսութեան հա-
մար հողը յարմար է եւ լաւ վարձատրում է
երկրաշարժի աշխատանքը:
Բազմաթիւ գիւղերի համար անհրաժեշտ էր
ունենալ ընդհանուր տեղական վաճառանոց եւ
վարչական կենտրոն:
Շամախի այդ վաճառանոցն է եւ կենտրոնը:
Իսկ հին ժամանակներում նա կատարում էր
եւ աւելի մեծ վաճառանոցի եւ աւելի մեծ
կենտրոնի դերը: Նա մի օղակ էր հանդիսանում
հիւսիսի եւ հարաւի առեւտրականների մէջ:
Իրուստամանի եւ Պարսկաստանի առեւտրա-
կանները Շամախու միջոցով ապրանքների փո-
խանակութիւն էին կատարում:
Շամախու եւ նրա գաւառի բնակիչների վրա
մնացել են նրա պատմական կենսաբի հետքերը:
Նա այժմ էլ պարտաւորում է իր մէջ բազ-
մազան տարրեր:

«Մա Դադատն է, ասում էք դուք, տես-
նելով այդտեղ Դադատան արհեստները եւ սո-
վորութիւնները»:
«Մա Պարսկաստան է, ասում էք դուք»:
արձանագրելով մի շարք բնորոշ գծեր պարս-
կական կենսաբի եւ բարբերից»:
«Մա Դարաբադ է, բացառանցում էք դուք»:
այդտեղով մի շարք գիւղեր, որտեղ ապրում են
Դարաբադի եկած նազ գաղթականները»:
«Մա հին Աղուանից աշխարհն է, յայտնում էք
դուք, լսելով Մադրասայի հայերի թափերն
լեզու»:
«Մա արաբական իշխանութեան ժառանգու-
թիւններից մէկն է, ասում էք դուք, տեսնելով
արաբների հետքերը մնացած գիւղերում եւ
բացառելիս հիւսիսի արաբաւորներին»:
Շամախու եւ նրա գաւառի հայերի մեծ մա-
սը հաղնում են թուրքերի տարազով: Մեր
երկրի բոլոր տեղերում նազ կինը պահպանել է
իր հին աւանդական զգեստը: Իսկ այստեղ նա
ընդունել է պարսկականը:
Մինչև այժմ էլ պարսկական բանաստեղ-
ծութիւնը, պարսկական երգանքութիւնը,
պարսկական մէլիսանան զեռ պահպանել են ի-
րանց գոյութիւնը այդտեղ:
Հետքեր:
Հին կենսաբի հետքեր:
Հին կուլտուրայի հետքեր:
Հին աղբիւրների հետքեր:
Հին կենսաբի նոր շարժումը է բացել Ա-
ռեւտրական կենտրոնները փոխվել են Կուր
տուրայի պահանջները նոր հիւսիսի են հանդէս
բերել: Ուղիները ուրիշ ուղղութիւն են վեր-
ցրել եւ Շամախին, դուրս վերադառնալ իր նախ-
կին դերից, պահպանել է միայն տեղական նշա-
նակութիւն, որ սակայն իր շրջակայքի համար
կարեւոր է:
«Ճիշտ է արդեօք, որ հրաբուխներ են երե-
ւացել Շամախու գաւառում, հարցնում էր ինձ
նորերս մի ծանօթ»:
«Երևի ճիշտ է, պատասխանեցի ես»:
«Ուրեմն մենք էլ կուենանք վերադառնալ նման
հրաբուխի, բացառանցից ծանօթ»:
«Ոչ, բացառեցի ես: Բազուի նահանգի մի-
ջանի տեղերում կան հրաբուխներ, որոնք ժա-
մանակ առ ժամանակ գործունէութիւն են ցոյց
տալիս: Նրանք բնակվում են կարճ ժամանակ,
արտաթորում են տիղմ մի որոշ քանակութեամբ
եւ դարձնալ հանգստանում: Ես տեսել եմ այդ-
պիսի հրաբուխներ եւ նոյն-իսկ բարձրացել
մինչև քերանք»:
Ծանօթն ցանկացաւ լսել մանրամասնութիւն-
ներ, որ եւ պատմեցի նրան: Ես նկարագրեցի
հրաբուխային մի քանի տեղեր, պա մեցի Սիւ-
միլի եւ Դալէ մի մէջ գտնվող Դոթուրանուր
լճակի մասին, որի վրա բեշկական յատկու-
թիւններ ունի եւ որի մէջ լողացնում են տն-
ն անասուններին բեշկելու նպատակով եւ
այլն»:
Այժմ հրաբուխային ժայթկումներ երեւա-
ցել են Մարազի եւ Դալէյանի մօտերը: Բա-
ցատրեցի ես»:
«Անկասկած այդ հրաբուխների երեւալը
լաւ նշան է նկատեց խօսակիցս, որովհետեւ
ստորերկրայ գաղերը եւ խառնուրդները կը
են գտնում դուրս թորվելու»:
«Այդպէս պէտք է ենթադրել, հաստատու-
ցի ես»:
Ես չօչախեցի երկրաշարժի խիստ հարուած-
ներին ենթարկված աշխարհի մի քանի գծերը:
Մեր առաջ սակայն վերջ ի վերջոյ կանգնած
են իր բոլոր այժմ երկրաշարժից վնասվածների
սարսափելի վիճակը եւ նրանց կարիքները:
«Ո՞վ պէտք է օգնէ բազմաթիւ կարօտեալ-
ներին, կը հարցնէք դուք»:
«Մենք բոլորս»:
«Ո՞վ պէտք է հողայ կարօտեալների բազ-
մաթիւ ծախքերը»:
«Դարձեալ մենք բոլորս»:
«Հարեւր հազարներ են հարկաւոր, ով կա-
րող է սոսկ այդ գուժարը, կը հարցնէք դուք»:
«Ժողովրդական կօպէկը»:
Վրձին

Դու՛ման ընդունեց Սարկոյի քաղաքային կրե-
դիտային ընկերութեան կանխադրութիւնը:
ՐՕՍՕՎ ԴՕՆԻ ՎՐԱ: Այլովում է «Մարո-
պօ» մեծ հիւրանոցը:
ԵՍԱՍԱ: Սաստիկ փոթորիկը վնասեց նորա-
կառույց պատնէշը:
ՄԵՎԱՍՏՈՊՈԼ: Փոխադարձ կրեդիտի ընկե-
րութեան արտակարգ ժողովը գանձարանի
վաճառած 100,000 ռուբլու վերաբերմամբ, ոչնչ-
նով չը վերջացաւ: Ժողովը չարտահանութիւնը
տեղի կուենայ այս օրերս:
ՐՕՍՕՎ ԴՕՆԻ ՎՐԱ: Ելալէ վիտինակայա կաշ-
տարանի մօտ տեղի ունեցած պեղումները ժա-
մանակ գտնվեց հին զէնք:
ԻԻԻԻԻՎ: Առատ ձիւն թափվելու պատճա-
ռով Լիֆլեանդեան նահանգում գնացքների եր-
թեւեկութիւնը մեծ անկանոնութեամբ է կա-
տարվում:
ՏԻԻՄԵՆ: Օղիի մենալաճառութիւնը մոցնե-
լուց յետոյ Տօրոյի նահանգում մտադրութիւն
կայ բանալ 453 գինետուններ:
ԲԱՊՈՒ: Ի հերքումն այն տեղեկութեան, որ
իբր թէ նախկին կրեոստները չեն օգնում
ֆուսլաճներին, այստեղից հարցորում են, թէ
նախկին ֆիրմաները նուիրատուութիւններ
արեցին: Հարցորում են նոյնպէս, որ Մեծ Իշ-
խան Միխայիլ Նիկոլայեւիչ իր Օգոստոսիտ
Չաւահերով նուիրեց 3000 ռուբլի:
«Երկարական ոչ» գործարանում գաղի պաշ-
թիւն տեղի ունեցաւ, որի ժամանակ սպանվեց
մեքենավարը:
ՍՏՕԿՅՈՒՄ: Ստոկհոլմի «Տրիֆունդէն» լրագրի
խօսքով, ամբիկական պողպատի սինդիկատը
ցնեց երկաթի հանքերի համարեա բոլոր սկ-
ցիտներական ընկերութիւնները նոսխալ գնով:
6 միլիոն կրօնով: Հիւսիսային Շվեդիայի եր-
կաթի հանքերը կանցնեն սինդիկատի ձեռք
այնանր:
ՊԱՐԻՉ: Դեպքան իշխան Ուրուսով երեկ
պաշտօնական ճաշ տուեց, որին ներկայ էին
քաղաքական եւ զինուորական աշխարհի եւ
Ֆրանսիական արիստոկրատայի ներկայացու-
ցիչները:
Գ փետրվարի
ՄԱԴԻԻԻ: Բացի Բարցելոնից՝ խոչըր անկար-
գութիւններ առաջացան նաեւ Կատալոնիայի
ուրիշ տեղերում: Զօրքի հետ ընդհարվելու
ժամանակ Բարցելոնում սպանված են աւելի
ան 40 մարդ: վիտարվածների թիւը չէ կա-
րելի որոշել: Դեռեւայ վէլյէր սենատում յայ-
տարարեց, թէ կարիքն ստիպում դէպքում՝
զէնքի կը կանչվեն պահեստի զօրքերը:
ՄՕՍԿՎԱ: Այսօր գեներալ-նահանգապետի
տան մէջ Բուխարայի էմիրի պատուին հանդի-
սաւոր երեկոյթ կազմվեց, որին հրաւիրված
էին 277 անձ: Մեծ Իշխան Սերգէյ Ալեքսանդ-
րովիչ եւ Մեծ Իշխանուհի Նիխաւետա մէ-
րօրովայի կողմից ուղարկված են—էմիրին՝
արժանի վազ, քաղաքով թանկագին անկե-
րով, պետական զինանշանով եւ Մեծ Իշխանի
վէնգէլով, իսկ էմիրի որդուն՝ սեղանի արծաթե
սպաս կարասի ձեռով, բերեղեայ արծաթա-
պատ պատուանդանի վրա: Բարձր աստիճանա-
ւորներից շատերը էմիրից ստացան ճագող
աստղի ստամանդեայ նշանը:
ԵԻՍԱՎԵՏՊՈԼ: Գաւառապետների համաժո-
ղովը ընտրւ էր հետեւեալ հարցերը, թէ ինչ
կարգի պէտք է հաստատուլ հողաբաժնիների
քանակութիւնը, յատկութիւնը եւ արդիւնաբե-
րութիւնը ճշդիւ որոշելու համար: ինչ կերպով
պէտք է հողային տուրքերը մասնատրել եւ
ինչպիսի գերահասակալի հարկային հաշ-
ւապահութիւն պէտք է մոցնել, որպէս զի
անգրագէտ հարկատու դասակարգը ապա-
հոված լինի հարստահարիչների կեղեքումնե-
րից: Համաժողովին ներկայ էին՝ երեւանից
յատկապէս եկած՝ գանձարանական պալատի
կառավարը, երեւանի հարկային տեսուչը եւ
Ելիսաւետպոլի նահանգի հարկային տեսուչնե-
րը: Կարեւոր համարվեց օգնութեան զալ գիւ-
ղական ազգաբնակչութեան, որ ջանկանում է
իր հողաբաժնիները չափել տեղական հողաւաճի-
ների ձեռքով: Չափումը պէտք է կատարվի
վարչութեան պաշտօնականի հսկողութեան
տակ: Հաշուապահութեան համար որոշվեց ըն-
դունել Սիկրիսկու ձեւը՝ մի քանի փոփոխու-
թիւններով:
ՍՈՒԿՈՒՄ: «Մեծ Իշխանուհի Կսենիա չղե-
նաւով ժամանեց Օլդէսուրգեան պրինցրէնի
Եւգենիա Մարսիլիանովնա Նորին Կայսերա-
կան Բարձրութեան մեկնումը ենթադրվում է
վազը»:
ՊԵՏԵՐԲՈՒԳ. «Перковья Вѣдомости»-ի
մէջ տպված է Սրբազանգոյն Սինոդին կից
գտնվող ուսումնարանական խորհրդի որոշումն

